

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 13/1

7 ապրիլի 2015 թ.

Քննարկվեց «Մալիշկա» ՍՊԸ 19.03.2015 թ-ի գանգատը ՀՀ ՖՆ Եղեգնաձորի ՏՀՏ պետի 16.03.2015 թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 0277921 որոշման դեմ:

«Մալիշկա» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.

05.02.2015 թ-ի 5100819 ակտի և 10.03.2015թ-ի թիվ 62 արձանագրության համաձայն «Մալիշկա» ՍՊԸ-ում իրականացված ստուգմամբ հայտնաբերվել է թվով տաս (1 շի արժեքը 40 ՀՀ դրամ, ընդհանուր գումարը 400 ՀՀ դրամ) շիշ հանքային ջուր, որոնց վրա «հանքային ջուր» դրոշմապիտակների փոխարեն եղել է անհատ ձեռնարկատեր Խաժակ Ենոքյանին պատկանող «ըմպելիք» դրոշմապիտակները:

Ինչպես արդեն հայտնել ենք 27.02.2015 թ-ի թիվ 58/37106614 քրեական գործով վարույթի ժամանակ «Մալիշկա» ՍՊԸ-ի կողմից շալցված հանքային ջուրը խանութներին, այդ թվում նաև Շատին համայնքում գտնվող խանութներին իրացնելիս, վերցվում է նույն քանակությամբ նույն լիտր տարողության ապակյա դատարկ այլ շեր, որոնք լվացվում և նորից շալցվում են: Շերի լվացման ժամանակ աշխատակցի անուշադրության պատճառով թվով տաս շի վրա մնացել է նախկինում Ա/Ձ Խաժակ Ենոքյանի անվամբ և իր կողմից արդեն օգտագործված «ըմպելիք» դրոշմապիտակները, որի արդյունքում շալցման ժամանակ այդ տաս շերը Սամվել Իսրայելյանին պատկանող «Մալիշկա» ՍՊԸ-ի կողմից չեն դրոշմապիտակավորվել:

Տեղեկացվում է, որ Ա/Ձ Խաժակ Ենոքյանին պատկանող շերը դրոշմապիտակավորվում են միայն «ըմպելիք» դրոշմապիտակներով, իսկ «Մալիշկա» ՍՊԸ ընկերությունում շալցվում է և «ըմպելիք» դրոշմապիտակներով շալցման ենթակա ապակյա տարաներով լիմոնադ, և «հանքային ջուր» դրոշմապիտակներով շալցման ենթակա ապակյա տարաներով հանքային ջուր: Հետևաբար ավելի խելամիտ կլիներ վնաս պատճառելու կամ օրենքը շրջանցելու նպատակ ունենալու դեպքում Ա/Ձ Խաժակ Ենոքյանին պատկանող «ըմպելիք» դրոշմապիտակներով շալցնել լիմոնադ, այլ ոչ թե հանքային ջուր: Ա/Ձ Խաժակ Ենոքյանի անվամբ գրանցված դրոշմապիտակներով շալցված ապակյա տարաների ընդհանուր գումարը (վնասի չափը) կազմում է 400 ՀՀ դրամ:

«Մալիշկա» ՍՊԸ-ն մտադրություն չի ունեցել ապօրինի ձեռք բերել այլ տնտեսվարող (10 հատ 3.8 ՀՀ դրամ արժողությամբ) դրոշմապիտակներ և հասցնել 38 ՀՀ դրամի վնաս, ինչն ակնհայտ երևում է նաև թիվ 37106614 քրեական գործով վարույթի որոշումից:

«Մալիշկա» ՍՊԸ-ն խնդրում է հաշվի առնել վերը նշված փաստերը և խախտումը չհամարել «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 170.7 հոդվածի 2-րդ մասին համապատասխան:

«Ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը»

«ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ «Ֆինանսների նախարարի 24.12.2014 թ-ի թիվ 5100819 հանձնարարագրի և «Ֆինանսների նախարարի ժ/պ 22.01.2015 թ-ի թիվ Ս-62-Ա հրամանի համաձայն «Մալիշկա» ՍՊԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) կատարվել է ակցիզային դրոշմանիշների կիրառման և հսկիչ նշանների (դրոշմապիտակների) ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է «ՖՆ ՕԿՎ 05.02.2015 թ-ի թիվ 5100819 ակտը (այսուհետ նաև Ակտ): Ակտի 2-րդ կետով մասնավորապես արձանագրվել է, որ համաձայն ընկերության տնօրեն Սամվել Իսրայելյանի գրավոր հայտարարության ընկերությունը ստուգվող ժամանակաշրջանում ապօրինի ձեռք է բերել 10 հատ «ըմպելիք» դրոշմապիտակներ, որոնք չեն պատկանել ընկերությանը, և դրանք դրոշմապիտակավորել է 0.5 լիտր տարողությամբ շշացված ապակյա տարայի՝ «հանքային ջուր» ապրանքներին, որոնք իրացրել է ընդհանուր գումարով 400 դրամ (1 շիշը 40 դրամով): Ընկերությունը խախտել է «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի պահանջները, որը պատասխանատվություն է նախատեսում «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 170.7 հոդվածով սահմանված կարգով:

Ակտը և կից նյութերը «ՖՆ ՕԿ վարչության պետի 10.02.2015 թ-ի գրությամբ ուղարկվել են ՀՀ ՖՆ Եղեգնաձորի ՏՀՏ՝ Ակտով արձանագրված խախտման վերաբերյալ վարչական վարույթ իրականացնելու նպատակով: Արդյունքում Եղեգնաձորի ՏՀՏ կողմից 10.03.2015 թ-ին կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ 62 արձանագրությունը, որում արձանագրվել է ընկերության տնօրենի կողմից Ակտով արձանագրված խախտումը կատարված լինելու հանգամանքը:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ ՖՆ Եղեգնաձորի ՏՀՏ պետի կողմից 16.03.2015 թ-ին կայացվել է վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 0277921 որոշումը, որով ընկերության տնօրենը «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 170.7 հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ գումարով 600.000 դրամի չափով:

Քննարկման ընթացքում նշվեց նաև, որ ստուգմամբ հայտնաբերվել է ընկերության կողմից շշացված 10 շիշ 0.5 լիտր տարողությամբ «Հայ-ռուսական բարեկամություն Ջերմուկ» տեսակի հանքային ջուր: Շշերի վրա «ջուր» ապրանքախմբի համար նախատեսված դրոշմապիտակների փոխարեն փակցված են եղել «ըմպելիք» ապրանքախմբի համար նախատեսված դրոշմապիտակներ, որոնք ձեռք են բերված եղել Ա/Ձ հաժակ Ենոթյանի կողմից: Վերջինս 01.12.2014 թ-ին տվել է գրավոր հայտարարություն այն մասին, որ զբաղվում է բացառապես լիմոնադի արտադրությամբ և երբևիցե «Ջերմուկ» տեսակի հանքային ջուր չի շշացվել: Ա/Ձ հաժակ Ենոթյանը հայտնել է նաև, որ «Հայ-ռուսական բարեկամություն Ջերմուկ» տեսակի հանքային ջուր արտադրվում է «Մալիշկա» ՍՊԸ-ի կողմից:

Ընկերության տնօրենն ընդունեց ստուգման արդյունքում արձանագրված խախտումը, պատճառաբանելով, որ այն կատարվել է թյուրիմացաբար՝ անուշադրության հետևանքով: Մասնավորապես, ընկերության տնօրենը նշեց, որ

«Մալիշկա» ՍՊԸ-ում աշխատում են միայն ինքը և իր կինը, իսկ խախտումը հավանաբար կատարվել է իր կնոջ վատ տեսողության և անուշադրության հետևանքով:

Հարկ է նշել, որ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 170.7 հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Ապօրինի ձեռք բերված ակցիզային դրոշմանիշերով և (կամ) հսկիչ նշաններով (դրոշմապիտակներով) ապրանքներ դրոշմավորելը, եթե դրանց ընդհանուր արժեքը վաճառողի մոտ նշված (իսկ չնշված լինելու դեպքում՝ օրենսդրությամբ սահմանված կարգով որոշված) գներով չի գերազանցում հիսուն հազար դրամը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի վեցհարյուրապատիկի չափով»:

Քննարկվող դեպքում ստուգմամբ ձեռք բերված ապացույցներով հիմնավորվել է ընկերության կողմից «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 170.7 հոդվածի 2-րդ մասի պահանջները խախտված լինելու հանգամանքը: Այսինքն, թույլ է տրվել զանցանք, որն առաջացնում է պատասխանատվություն «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 170.7 հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

ՀՀ ՖՆ Եղեգնաձորի ՏՀՏ պետի 16.03.2015 թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 0277921 որոշումը թողնել անփոփոխ, իսկ գանգատը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ